ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 07.03.2022թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2022/16

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի,

Մասնակցությամբ՝

«Հիբրիդ Տելեմատիկա» ՍՊԸ-ի տնօրեն՝ Ա. Օզմանյանի (պետական գրանցման համար՝ 222.110.925413)

«Հիբրիդ Տելեմատիկա» ՍՊԸ-ի լիազորված ներկայացուցիչներ Հ. Ենգոյանի, Գ. Շիրմազանյանի և «ԻՌԿՕՍ» բաժնետիրական ընկերության տեխնիկական տնօրեն՝ Ա. Բոգդանովի (լիազորագրեր՝ տրված 10.02.2022թ.),

ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության լիազորված ներկայացուցիչներ՝ Վ. Սարգսյանի, Ա. Բաղդասարյանի, Կ. Գրիգորյանի, Օ. Ասատրյանի, Ս. Հարությունյանի և Կ. Կուրբանյանի (լիազորագրեր՝ տրված 10.02.2022թ.),

«Լոկատոր» ՓԲԸ-ի լիազորված ներկայացուցիչ՝ Կ. Գրիգորյանի (լիազորագիր՝ տրված 11.02.2022թ.),

քննելով ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության կարիքների համար «ՀՀ տարածքում բազային և շարժական ռադիոմոնիթորինգի համակարգի» ներդրման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարված «ԲՏԱՆ-ԲՄԱՇՁԲ-2022/01» ծածկագրով բաց մրցույթի շրջանակներում «Հիբրիդ Տելեմատիկա» ՍՊԸ-ի կողմից 07.02.2022թ. ներկայացված (08.02.2022թ. վարույթ

ընդունված) բողոքը (հետայսու նաև՝ ԳԲՔԱ-ՆԳ-2022/16 բողոք) և կից փաստաթղթերը, պարզեցի հետևյալը.

1. «Հիբրիդ Տելեմատիկա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«Հիբրիդ Տելեմատիկա» ՍՊԸ-ն (հետայսու նաև՝ Ընկերություն) 07.02.2022թ. ներկայացված բողոքով հայտնել է հետևյալը.

«Գործի հակիրճ նկարագրությունը և բողոքի փաստերը

ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության կարիքների համար՝ ՀՀ տարածքում բազային և շարժական ռադիոմոնիթորինգի համակարգի» ներդրման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ԲՏԱՆ-ԲՄԱՇՁԲ-2022/01» ծածկագրով բաց մրցույթ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

Ընթացակարգի հրավերի 1.1 կետի համաձայն՝ գնման առարկա է հանդիսանում ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության կարիքների համար՝ «ՀՀ տարածքում բազային և շարժական ռադիոմոնիթորինգի համակարգի» ներդրման աշխատանքների ձեռքբերումը (այսուհետ՝ նաևաշխատանք), որը խմբավորված է 1 չափաբաժիններում՝

Չափաբաժի ների համարները	Չափաբաժնի անվանումը
1	«ՀՀ տարածքում բազային և շարժական ռադիոմոնիթորինգի համակարգի» ներդրման աշխատանքներ

Աշխատանքի տեխնիկական բնութագրերը, ինչպես նաև մասնագիրը, տեխնիկական տվյալները և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը կազմում են կնքվելիք պայմանագրի անբաժանելի մասը, որի նախագիծը ներկայացված է սույն հրավերի N 6 հավելվածում:

Ընթացակարգի Հրավերի տեխնիկական բնութագիր - գնման ժամանակացուցը՝ տես Հրավերի 64-99 էջերում:

Հրավերի տեխնիկական բնութագիր - գնման ժամանակացուցի 5-րդ բաժնից մինչև 7-րդ բաժինը ներառյալ սահմանված են համակարգի գլխավոր, սպասարկվող,

չսպասարկվող և շարժական կայանների նկատմամբ տեխնիկական պահանջներ՝ տեխադրվելիք սարքավորումների մասով:

www.gnumner.am պաշտոնական կայքում 30.12.2021թ. հրապարակվել է «ԲՏԱՆ-ԲՄԱՇՁԲ-2022/01» ծածկագրով բաց մրցույթի հրավերը և հայտերը ներկայացնելու վերջնաժամկետ է սահմանված 11.02.2022թ.:

Բողոքի իրավական հիմքերը և հիմնավորումները.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք) 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ սույն օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք, այն է՝

1) պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերում՝ համարժեք հատուցմամբ.

2) գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Օրենքի 13-րդ հոդվածի՝

1-ին մասի համաձայն՝ գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը: Գնման առարկայի բնութագրերը, որոնք ներառում են նաև պայմանագրի գինը, ընդգրկվում են պայմանագրում:

2-րդ մասի համաձայն՝ գնման առարկայի բնութագրերը՝

1) պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար.

2) չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը.

3) պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը.

4) ներառում են գնման առարկայի մասնագրի, տեխնիկական տվյալների, իսկ աշխատանքների դեպքում՝ նաև աշխատանքների ծավալաթերթի, ժամանակացույցի և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը:

3-րդ մասի համաձայն՝ ելնելով գնման առարկայի առանձնահատկությունից՝ դրանց հատկանիշները հնարավորինս ներառում են ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության որակին, ստանդարտին, անվտանգությանը, պայմանական նշաններին, տերմինաբանությանը, փաթեթավորմանը, բեռնաթափմանը, չափին, նախագծերին, ինչպես նաև գնման առարկայի այլ հատկանիշներին վերաբերող պայմանների հստակ նկարագրությունը՝ հիմնված միջազգային ստանդարտների և Հայաստանի Հանրապետությունում գործող նորմատիվատեխնիկական փաստաթղթերի, ստանդարտների, իսկ դրանց բացակայության դեպքում՝ ժամանակավոր տեխնիկական պայմանների վրա:

Գտնում ենք, որ «ԲՏԱՆ-ԲՄԱՇՁԲ-2022/01» ծածկագրով բաց մրցույթի հրավերը կազմվել է ՀՀ գնումների մասին օրենսդրության կոպիտ խախտմամբ, մասնավորապես, Հրավերի տեխնիկական բնութագիր - գնման ժամանակացուցի 5-րդ բաժնից մինչև 7-րդ բաժինը ներառյալ սահմանված են համակարգի գլխավոր, սպասարկվող, չսպասարկվող և շարժական կայանների նկատմամբ տեխնիկական պահանջներ՝ տեղադրվելիք սարքավորումների մասով, որոնց մասնագիտական համեմատական վերլուծությունը վկայում է, որ այդ տեխնիկական պարամետրերը իրենց համակցության մեջ համապատասխանում են բացառապես մեկ ընկերության՝ ROHDE&SCHWARZ (R&S) ընկերության արտադրության սարքերին:

Ի հավաստումն վերոհիշյալ եզրահանգման՝ կից բողոքին ներկայացվում է բողոքի Հավելված 1-ը, որտեղ կատարվել է տեխնիկական բնութագրի մասնագիտական համեմատական վերլուծություն, որի նպատակն է ներկայացնել ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության կարիքների համար՝ ՀՀ

տարածքում բազային և շարժական ռադիոմոնիթորինգի համակարգի» ներդրման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարված «ԲՏԱՆ-ԲՄԱՇՁԲ-2022/01» ծածկագրով բաց մրցույթի հրավերի տեխնիկական բնութագրով պահանջված սարքավորումների համապատասխանությունը բացառապես ROHDE&SCHWARZ (R&S) ընկերության արտադրության սարքերին:

Գտնում ենք, որ նման բովանդակության տեխնիկական բնութագրի պայմաններում «ԲՏԱՆ-ԲՄԱՇՁԲ-2022/01» ծածկագրով բաց մրցույթի հրավերը հակասում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի, 7-րդ հոդվածի, ինչպես նաև 13-րդ հոդվածի պահանջներին, որի արդյունքում Ընթացակարգի հրավերի չի սահմանում մրցակցության հավասար պայմաններ հնարավոր մասնակիցների համար, հանգեցնում է գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը, ինչպես նաև խոչընդոտում գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացմանը, որն էլ իր հերթին հանգեցնում է գնման գործընթացի ոչ միասնական կանոններով, հակամրցակցային և խտրական հիմունքներով կազմակերպում, ինչպես նաև նվազեցնում պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակը:

Օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձն իրավունք ունի պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների կամ անգործության վերաբերյալ ընդունելու հետևյալ որոշումները.

ա. արգելելու կատարել որոշակի գործողություններ և ընդունել որոշումներ,

բ. պարտավորեցնելու ընդունել համապատասխան որոշումներ, ներառյալ՝ չկայացած հայտարարելու գնման ընթացակարգը, բացառությամբ պայմանագիրը անվավեր ճանաչելու մասին որոշման:

Ելնելով վերոգրյալից՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին խնդրում եմ՝ պարտավորեցնել «ԲՏԱՆ-ԲՄԱՇՁԲ-2022/01» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովին ընդունել որոշում ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության կարիքների համար՝ ՀՀ տարածքում բազային և շարժական ռադիոմոնիթորինգի համակարգի» ներդրման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարված «ԲՏԱՆ-ԲՄԱՇՁԲ-2022/01» ծածկագրով բաց մրցույթը չկայացած հայտարարելու վերաբերյալ»:

Ընկերություն Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին 10.02.2022թ. ուղղված միջնորդությամբ հայտնել է հետևյալը.

«Ձեր վարույթում է քննվում «Հիբրիդ Տելեմատիկա» ՍՊԸ-ի կողմից ներկայացրած թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2022/16 բողոքը:

Վերոհիշյալ բողոքով վիճարկվել է ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության կարիքների համար՝ ՀՀ տարածքում բազային և շարժական ռադիոմոնիթորինգի համակարգի» ներդրման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարված «ԲՏԱՆ-ԲՄԱՇՁԲ-2022/01» ծածկագրով բաց մրցույթ հրավերը, որը ըստ բողոքաբերի՝ խտրական է, սահմանափակում է մրցակցությունը և չի բխում պատվիրատուի կարիքից և համապատասխանաբար առաջացնում է պետական բյուջեի միջոցների ոչ արդյունավետ օգտագործմանը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 9-րդ կետի համաձայն՝ բողոքն ստանալու օրվանից հաշված՝ մեկ աշխատանքային օրվա ընթացքում, այդ մասին գնումների հետ կապված բողոքներ քննող անձը հայտարարություն է հրապարակում տեղեկագրում՝ նշելով հրապարակման ամսաթիվը:

«Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի գործունեության կարգի» (հաստատվել է ՀՀ ֆինանսների նախարարի 06.12.2018թ. N 600-Ն հրամանով) 15-րդ կետի համաձայն՝ բողողքներ քննող անձն անձն ապահովում է բողոքարկման ընթացակարգում ներգրավված բոլոր կողմերի՝ տվյալ բողոքի քննության շրջանակներում հրավիրված նիստերին մասնակցելու և իրենց տեսակետները, դիրքորոշումները և ապացույցները ներկայացնելու հնարավորությունը: Սույն կարգի իմաստով բողոքարկման ընթացակարգի պարտադիր կողմեր են համարվում պատվիրատուն, բողոք և/կամ համանման բողոք ներկայացրած անձը (անձինք), ինչպես նաև էլեկտրոնային գնումների համակարգի տեխնիկական սպասարկումն իրականացնող անձը (անձինք)՝ եթե բողոք բերողի իրավունքի ենթադրյալ խախտումը վերաբերում է էլեկտրոնային գնումների համակարգի աշխատանքին: ՀՀ պետական վերահսկողական ծառայության, Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի և հասարակական կազմակերպությունների՝ օրենքի 50-րդ հոդվածի 9-րդ կետով նախատեսված հայտարարությունը տեղեկագրում հրապարակվելու օրվանից հինգ աշխատանքային օրվա ընթացքում տվյալ բողոքարկման ընթացակարգում որպես կողմ ներգրավելու՝ Անձին ներկայացված գրավոր պահանջը ենթակա է բավարարման, իսկ նշված ժամկետից հետո նման պահանջ ներկայացվելու դեպքում վերջիններիս որպես կողմ ներգրավելու կամ մերժելու հարցը որոշում է Անձը:

Բողոքներ քննող անձին տեղակացնում ենք, որ «Հիբրիդ Տելեմատիկա» ՍՊԸ-ի կողմից ներկայացրած ԳԲՔԱ-ՆԳ-2022/16 բողոքի վերաբերյալ հայտարարությունը

www.gnumner.am տեղեկագրում հրապարակվել է 08.02.2022թ., և համապատասխանաբար 10.02.2022թ., ներկայացված սույն միջնորդությամբ պահպանվել է ՀՀ ֆինանսների նախարարի 06.12.2018թ. N 600-Ն հրամանով) 15-րդ կետով սահմանված միջնորդությունը ներկայացնելու 5 աշխատանքային օրվա ժամկետը:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով «Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի գործունեության կարգի» 15-րդ կետի պահանջները, ինչպես նաև հաշվի առնելով հարցի կարևորությունը և պետական բյուջեի էական խնայողության հնարավորությունը՝ խնդրում ենք «Հիբրիդ Տելեմատիկա» ՍՊԸ-ի կողմից ներկայացրած ԳԲՔԱ-ՆԳ-2022/16 բողոքի քննության ընթացակարգին որպես կողմ ներգրավել ՀՀ պետական վերահսկողական ծառայությանը»:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 11.02.2022թ. ժամը 10:00-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է ներկայացուցիչների մասնակցությունը, ովքեր պնդել են բողոքը, իր հերթին Ընկերության ներկայացուցիչ «ԻՌԿՕՍ» բաժնետիրական ընկերության տեխնիկական տնօրեն Ա. Բոգդանովը, ով նիստին մասնակցել է Skype հավելվածի միջոցով, մասնավորապես հայտնել է, որ Պատվիրատուի կողմից «ՀՀ տարածքում բազային և շարժական ռադիոմոնիթորինգի համակարգի» ներդրման աշխատանքների ձեռքբերումը հնարավոր է իրականացնել այլ տիպի սարքերով, մինչդեռ՝ Ընթացակարգի հրավերի տեխնիկական բնութագրով նշված են սարքավորումներ, որոնք համապատասխանում են բացառապես մեկ ընկերության արտադրության սարքերին և սահմանափակում են այլ մասնակիցների մասնակցությունը Ընթացակարգին:

Ընկերությունը 16.02.2022թ. Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված գրությամբ գրությամբ մասնավորապես հայտնել է հետևյալը.

«Ներկայացված բողոքով հայտնել են, որ Ընթացակարգի հրավերը խտրական է, հակամրցակցային և հրավերով նախատեսված սարքավորումները համապատասխանում են բացառապես մեկ ընկերության ROHDE&SCHWARZ (R&S) ընկերության արտադրության սարքերին:

Ի հավաստումն վերոհիշյալ փաստերի՝ բողոքներ քննող անձին խնդրում ենք նկատի ունենալ, որ տվյալ ընթացակարգով արդեն իսկ armeps համակարգի միջոցով տեղի է ունեցել հայտերի բացում, և պարզվել, որ տվյալ ընթացակարգին կանխատեսելիորեն մասնակցել է միայն մեկ մասնակից, այն է՝ ROHDE&SCHWARZ (R&S) ընկերությունը:

Հիմք ընդունելով բողոքի քննությանը նվիրված նիստի ընթացքում հնչեցված հարցերը՝ սույն գրությանը կից ներկայացնում ենք «ԲՏԱՆ-ԲՄԱՇՁԲ-2022/01» ծածկագրով բաց մրցույթի հրավերի վերաբերյալ արված մասնագիտական վերլուծությունը, դիտողությունները և առաջարկությունները, առ այն, թե ինչպիսին պետք է լինի տվյալ ընթացակարգի հրավերը, որպեսզի լինի մրցակցային և ոչ խտրական»:

Միևնույն ժամանակ, Ընկերության տնօրենը ապահովելով իր և ներկայացուցիչների մասնակցությունը 01.03.2022թ. ժամը 09:25-ին բողոքի քննության նպատակով հրավիրված նիստին՝ միջնորդել են Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին տրամադրելու ժամանակ՝ բողոքի քննությամբ ներգրավված երրորդ անձ «Լոկատոր» ՓԲԸ-ի կողմից ներկայացված դիտարկումների վերաբերյալ գրավոր դիրքորոշում ներկայացնելու համար, սակայն արձանագրում եմ, որ սույն որոշումը կայացնելու օրվա դրությամբ այն չի ներկայացվել:

2. <u>ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված դիրքորոշումը և հիմնավորումները.</u>

ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարությունը 09.02.2022թ. թիվ 07/21.1/910-2022 գրությամբ հայտնել է հետևյալը

«Ի պատասխան Ձեր 2022թ. փետրվարի 8-ի թիվ /ԲՔԱ-ԳՆ/1/2185-2022 գրության՝ Ձեզ ենք ներկայացնում «Հիբրիդ Տելեմատիկա» ՍՊԸ-ի կողմից 07.02.2022թ. ներկայացված բողոքի վերաբերյալ որոշում կայացնելու համար անհրաժեշտ բոլոր փաստաթղթերը:

Միաժամանակ հայտնում ենք, որ ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության կարիքների համար ՀՀ տարածքում բազային և շարժական ռադիոմոնիթորինգի համակարգի ներդրման աշխատանքների (2022-2024թթ.) ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԲՏԱՆ-ԲՄԱՇՁԲ-2022/01» ծածկագրով բաց մրցույթի հրավերում ներկայացված տեխնիկական բնութագրում «ROHDE&SCHWARZ(R&S)» ընկերության վերաբերյալ չկա ոչ մի հղում և «Գնումների մասին» ՀՀ օրենքին հակասող դրույթներ:

Ավելին՝ տեխնիկական բնութագրի վերջնամասում կարմիր գույնով գրված է հետևյալ նախադասությունը՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված ցանկացած հղման դեպքում կիրառելի է (կամ համարժեքը) արտահայտությունը:

Հարկ ենք համարում նշել, որ «ԳԲՔԱ-ՆԳ-2022/16» բողոքի քննության նպատակով հրավիրված նիստին կմասնակցեն ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության աշխատակիցները և «Հեռահաղորդակցության Հանրապետական Կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխավոր տնօրենի տեղակալը և գլխավոր տնօրենի խորհրդականը»:

Ի լրումն վերը նշված գրության՝ Պատվիրատուն 15.02.2022թ. թիվ 07/21.1/1026-2022 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Հայտնում ենք, որ համաձայն ՀՀ կառավարության 2019 թվականի հոկտեմբերի 3-ի թիվ 1346-Լ որոշման՝ ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության կարիքների համար ՀՀ տարածքում բազային և շարժական ռադիոմոնիթորինգի համակարգի նախագծման ծառայությունների ձեռքբերման նպատակով 13.05.2020թ.-ին հայտարարվել է «ԲՏԱՆ-ԳՀԾՁԲ-2020/04» ծածկագրով գնման ընթացակարգ, որի շրջանակում հայտ է ներկայացրել մեկ մասնակից՝ «Ցենտրոնիկս» ՍՊԸ-ն, սակայն սահմանված ժամկետներում մասնակցի կողմից չի ներկայացվել որակավորման և պայմանագրի ապահովումները, ինչի արդյունքում «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն ընթացակարգը հայտարարվել է չկայացած:

Այնուհետև վերոնշյալ ծառայությունների ձեռքբերման նպատակով 21.08.2020թ.-ին վերահայտարարվել է «ԲՏԱՆ-ԳՀԾՁԲ-2020/08» ծածկագրով գնման ընթացակարգ, որի արդյունքում 22.09.2020թ-ին ընթացակարգի միակ մասնակից «Լոկատոր» ՓԲԸ-ի հետ կնքվել է ծառայությունների մատուցման պայմանագիր (կցվում է): Ծառայությունները մատուցվել են պայմանագրով սահմանված կարգով և ժամկետներում, որի արդյունքում ձեռք է բերվել ՀՀ տարածքում բազային և շարժական ռադիոմոնիթորինգի համակարգի ներդրման աշխատանքների համար անհրաժեշտ պայմանների և պահանջների տեխնիկական առաջադրանք, որից հետո «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա 30.12.2021թ. հայտարարվել է «ԲՏԱՆ-ԲՄԱՇՁԲ-2022/01» ծածկագրով բաց մրցույթ:

Բողոքի շրջանակներում Ձեզ ենք տրամադրում նաև պատասխանատու ստորաբաժանման (Հեռահաղորդակցության հանրապետական կենտրոն ՊՈԱԿ-ի) կողմից ներկայացված պարզաբանումները, այն է՝

համաձայն «Հիբրիդ Տելեմատիկա» ՍՊԸ ներկայացրած բողոքի «ԲՏԱՆ-ԲՄԱՇՁԲ-2022/01» ծածկագրով բաց մրցույթի հրավերը հակասել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 3-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի, 7-րդ և 13-րդ հոդվածների պահանջներին, որի արդյունքում ընթացակարգի հրավերը չի սահմանում մրցակցության

հավասար պայմաններ հնարավոր մասնակիցների համար, հանգեցնում է գնումների գործընթացում մրցակցության խոչընդոտների առաջացմանը:

Օրենքի 3-րդ հոդվածի համաձայն Օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք, այն է՝

1) պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերում՝ համարժեք հատուցմամբ.

2) գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում:

2. Գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Օրենքի 7-րդ հոդվածի համաձայն՝

1.Ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

2. Գնումների գործընթացին որևէ երկրի ռեզիդենտ հանդիսացող անձի (անձանց) մասնակցությունը կարող է սահմանափակվել միայն Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ, եթե դա անհրաժեշտ է Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության և պաշտպանության ապահովման համար:

3. Եթե սույն հոդվածի 2-րդ մասը չի կիրառվում, ապա գնումների կամ նախաորակավորման հայտարարության մեջ նշվում է, որ հայտեր կարող են ներկայացնել բոլորը, անկախ նրանց՝ օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն, քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ընդ որում, հայտարարությունը ենթակա չէ փոփոխման: Եթե կիրառվում է սույն հոդվածի 2-րդ մասը, ապա գնումների կամ նախաորակավորման հայտարարության մեջ նշվում է այդ սահմանափակման մասին:

Տվյալ դեպքում հայտարարվել է բաց մրցույթ՝ ընթացակարգի հրավերը կազմվել է Օրենքի սկզբունքներին համահունչ, չի պարունակել որևէ խտրական դրույթ, չի սահմանափակել որևէ անձի մասնակցությունը գործընթացին: Գնման առարկայի բնութագիրը որևէ հղում չի պարունակում առևտրային նշանի, ֆիրմային անվանման, արտոնագրի, էսքիզի կամ մոդելի, ծագման երկրի կամ կոնկրետ աղբյուրի կամ արտադրողի վերաբերյալ:

Ինչ վերաբերում է բողոք բերողի՝ գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացմանը խոչընդոտելու և պետական բյուջեին մեծ վնաս հասցնելու պնդմանը, հարկ է նկատել, որ բողոքը կազմվել է 2022 թվականի փետրվարի 7-ին, մինչդեռ նշված ընթացակարգի հայտերի բացման ժամկետը 2022 թվականի փետրվարի 11-ն էր: Հետևաբար այդ պնդումը հիմնված է ենթադրությունների վրա, հիմնավորված չէ, չկա որևէ չափանիշ, որով բողոք բերողը կարող էր հանգել նման եզրակացության:

Հարկ ենք համարում անդրադառնալ նաև բողոքին կից Հավելված 1-ով ներկայացված մասնագիտական վերլուծությանը, որով բողոք բերողը եկել է այն եզրահանգման, որ տեխնիկական պարամետրերը համապատասխանում են բացառապես մեկ՝ ROHDE&SCHWARZ ընկերության արտադրության սարքերին: Այս տեսանկյունից հարկ է նկատել, որ «Հիբրիդ Տելեմատիկա» ՍՊԸ կողմից արված վերլուծությունը չունի որևէ իրավական ուժ, պարտադիր բնույթ, և ինքնին չի կարող ապացույց հանդիսանալ բողոք բերողի վկայակոչած հանգամանքին՝ համապատասխանությունը բացառապես ROHDE&SCHWARZ ընկերության արտադրության սարքերին: Մասնագիտական վերլուծությունը կարող է վկայել միայն այն մասին, որ ROHDE&SCHWARZ ընկերության արտադրության սարքերը համատասխանում են հրավերով սահմանված չափանիշներին:

Այնուամենայնիվ, Հավելված 1-ում նշված է, որ 5.2, 5.3 և առավելևս 5.5 ենթաբաժիններում չափազանց կոնկրետացված է, թե ինչպիսին պետք է լինեն անտենաները, որոնք ապահովում են ազդանշանների ընդունում և տեղորոշում: Դիտարկելով նշված ենթաբաժիններից 5.5-ը՝ որպես վատագույն տարբերակ ցանկանում ենք նշել, որ տվյալները վերցվել են Հեռահաղորդակցության միջազգային միության 2015թ. Հրապարակված «Ռադիոհաճախականային սպեկտրի օգտագործման հսկում» Տեղեկագրից (Контроль за использованием спектра- Справочник): Տվյալ Տեղեկագրի 3-րդ գլուխը վերաբերվում է «Սպեկտրի օգտագործման հսկման» և «Հսկման գործողությունների ավտոմատացմանը»: Ենթագլուխ 3.2.2.3-ից սկսում են նկարագրել

անտենաների տեսակները (էջ 120): Ենթագլուխ 3.2.4.1՝ «Շատ բարձր հաճախականությունների և ուլտրաբարձր հաճախականությունների համար շրջանաձև անտենաների տիպերը», հստակ նշված է, որ 100 ՄՀց հաճախականություններից ներքև հաճախականային շերտերում ընդհանուր անտենաների դեպքում ունենում ենք զգայնության սահմանափակում: Այդ իսկ պատճառով ընտրվել է 8.3կՀց-100ՄՀց շերտի անտենա: Հաջորդ անտենան դա 20ՄՀց-1300ՄՀց անտենան է, որի տիպի և ռադիոհաճախականային տիրույթի վերաբերյալ տեղեկատվությունը բերված է էջ 134-ում:

Հարկ ենք համարում նշել, որ «Հեռահաղորդակցության Հանրապետական Կենտրոն» ՊՈԱԿ-ում ներկայումս տեղորոշման աշխատանքների իրականացման համար օգտագործվում է դեռևս 2001թ. «Aerosystems» Կանադական ընկերությունից ձեռքբերված Cubic ֆիրմային արտադրության AA 1319 մակնիշի անտենան, ինչը նշանակում է, որ նշված հաճախականային շերտում տեղորոշման անտենաներ արտադրում է ոչ միայն բողոք բերողի կողմից նշված ընկերությունը:

1300ՄՀց-6000ՄՀց հաճախականային շերտի ընտրությունը պայմանավորված է ռադիոմոնիտորինգի իրականացման համար նախատեսված ռադիոհաճախականությունների շերտերով: Ինչ վերաբերվում է EB500 ընդունիչի համապատասխանությունը, ապա այդ ընդունիչը հանդիսանում է նմանատիպ ընդունիչների լավագույններից մեկը և աշխարհում ռադիոմոնիթորինգի համակարգեր արտադրող և նախագծող բազմաթիվ կազմակերպություններ այն ներառում են որպես բաղադրիչ մաս իրենց համակարգերում: Կարող ենք դիտարկել չինական Jasqsson new technology limited ռադիոհաճախականային սպեկտրի մոնիտորինգի և տեղորոշման SkyScan 7 համակարգը, գերմանական LS TelCom և այլն:

Միաժամանակ կարևոր ենք համարում նշել, որ մրցույթը հայտարարվել է ռադիոմոնիթորինգի համակարգի ներդրման այլ ոչ թե սարքավորումների ձեռքբերման համար: Հետևաբար համակարգի ներդրման մրցույթին մասնակցած ցանկացած անձ կարող էր օգտագործել ինչպես իր կողմից արտադրած այնպես էլ ROHDE&SCHWARZ ընկերության կողմից արտադրած սարքավորումները:

Ցանկանում ենք նշել, որ Иркос ռուսական կազմակերպությունը նույնպես ներառում է R&SCH ընկերության ընդունիչներ իրենց լուծումներում: Տեղեկագրից նշված էջերը և AA 1319 անտենայի վերաբերյալ տեղեկատվությունը կցվում է»:

3. <u>ՀՀ պետական վերահսկողական ծառայության կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված դիրքորոշումը.</u>

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը ՀՀ պետական վերահսկողական ծառայությանն (հետայսու նաև՝ Ծառայություն) ուղղված 10.02.2022թ. թիվ /ԲՔԱ-ԳՆ/1/2364-2022 գրությամբ հայտնել է հետևյալը.

«ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի վարույթում է գտնվում ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության կողմից «ՀՀ տարածքում բազային և շարժական ռադիոմոնիթորինգի համակարգի» ներդրման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարված «ԲՏԱՆ-ԲՄԱՇՁԲ-2022/01» ծածկագրով բաց մրցույթի շրջանակներում «Հիբրիդ Տելեմատիկա» ՍՊԸ-ի 07.02.2022թ. ներկայացված բողոքը:

ՀՀ ֆինանսների նախարարի 06.12.2018թ. թիվ 600-Ն հրամանով հաստատված «Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի գործունեության» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 15-րդ կետի համաձայն՝ ***<u>Անձն ապահովում է բողոքարկման ընթացակարգում ներգրավված բոլոր կողմերի՝ տվյալ բողոքի քննության շրջանակներում հրավիրված նիստերին մասնակցելու և իրենց տեսակետները, դիրքորոշումները և ապացույցները ներկայացնելու հնարավորությունը:</u>*** Սույն կարգի իմաստով բողոքարկման ընթացակարգի պարտադիր կողմեր են համարվում պատվիրատուն, բողոք և/կամ համանման բողոք ներկայացրած անձը (անձինք), ինչպես նաև էլեկտրոնային գնումների համակարգի տեխնիկական սպասարկումն իրականացնող անձը (անձինք)՝ եթե բողոք բերողի իրավունքի ենթադրյալ խախտումը վերաբերում է էլեկտրոնային գնումների համակարգի աշխատանքին: ***<u>ՀՀ պետական վերահսկողական ծառայության</u>***, Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի և հասարակական կազմակերպությունների՝ ***<u>օրենքի 50-րդ հոդվածի 9-րդ կետով նախատեսված հայտարարությունը տեղեկագրում հրապարակվելու օրվանից հինգ աշխատանքային օրվա ընթացքում տվյալ բողոքարկման ընթացակարգում որպես կողմ ներգրավելու՝ Անձին ներկայացված գրավոր պահանջը ենթակա է բավարարման</u>***, իսկ նշված ժամկետից հետո նման պահանջ ներկայացվելու դեպքում վերջիններիս որպես կողմ ներգրավելու կամ մերժելու հարցը որոշում է Անձը:

«Հիբրիդ Տելեմատիկա» ՍՊԸ-ի 10.02.2022թ. ներկայացված միջնորդության հիման վրա՝ Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշմամբ ԳԲՔԱ-ՆԳ-2022/16

բողոքի շրջանակներում ՀՀ պետական վերահսկողական ծառայությունը Կարգի 15-րդ կետի համաձայն՝ ներգրավվել է որպես կողմ:

Միևնույն ժամանակ հայտնում եմ, որ բողոքի քննության նպատակով հրավիրված նիստը նշանակված է 11.02.2022թ. ժամը 10:00-ին (հասցե՝ ք. Երևան, Մելիք-Ադամյան 1, 1-ին հարկ, 115 դահլիճ):

Կից տրամադրվում է «Հիբրիդ Տելեմատիկա» ՍՊԸ-ի կողմից 07.02.2022թ. ներկայացված բողոքը՝ կից նյութերով»:

Ի պատասխան վերը նշված գրության՝ ՀՀ պետական վերահսկողական ծառայությունը 14.02.2022թ. թիվ Ե/286-22 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Ի պատասխան Ձեր 2022թ. փետրվարի 10-ի Մ/289-22 գրության՝ «Հիբրիդ Տելեմատիկա» ընկերության միջնորդությամբ ԳԲՔԱ-ՆԳ-2022/16 բողոքի քննությանը ՀՀ պետական վերահսկողական ծառայության (այսուհետ՝ Ծառայություն) կողմից որպես երրորդ կողմ ներկայացուցիչ ներգրավելու վերաբերյալ հայտնում ենք հետևյալը.

Ծառայությունը միջնորդությունն ստացել է 2022թ. փետրվարի 10-ին ժամը 14:40, իսկ գործի քննությունը նշանակվել է 2022թ. փետրվարի 11-ին ժամը 10:00-ին, հետևաբար մեկօրյա ժամկետում անհնար է եղել ուսումնասիրել գործի ողջ նախապատմությունը և ձևավորել մասնագիտական դիրքորոշում: Հետևաբար նշված սեղմ ժամկետներում Ծառայության աշխատակիցները հնարավորություն չեն ունեցել որպես երրորդ կողմ ներգրավվել գործի քննությանը:

Ելնելով վերոգրյալից՝ անհրաժեշտ է հետայսու Ծառայությանը որպես կողմ ներգարվելու դեպքում այդ մասին տեղեկացնել նախապես՝ հաշվի առնելով քննող գործի ծավալները»:

4. <u>«Լոկատոր» ՓԲԸ-ի կողմից բողոքով ներկայացված փաստերը և հիմնավորումները.</u>

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը «Լոկատոր» ՓԲԸ-ին ուղղված 16.02.2022թ. թիվ /ԲՔԱ-ԳՆ/1/2804-2022 գրությամբ հայտնել է հետևյալը.

«ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի վարույթում է գտնվում ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության (հետայսու՝ Պատվիրատու) կողմից «ՀՀ տարածքում բազային և շարժական ռադիոմոնիթորինգի համակարգի» ներդրման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարված

«ԲՏԱՆ-ԲՄԱՇՁԲ-2022/01» ծածկագրով բաց մրցույթի (հետայսու՝ Ընթացակարգ) շրջանակներում «Հիբրիդ Տելեմատիկա» ՍՊԸ-ի 07.02.2022թ. ներկայացված բողոքը:

Տեղեկացնում եմ, որ Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշմամբ ԳԲՔԱ-ՆԳ-2022/16 բողոքի շրջանակներում «Լոկատոր» ՓԲԸ-ն ներգրավվել է որպես կողմ, հաշվի առնելով այն փաստական հանգամանքը, որ Ընթացակարգի հրավերը կազմվել է «ԲՏԱՆ-ԳՀԾՁԲ-2020/08» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության և «Լոկատոր» ՓԲԸ-ի միջև կնքված ծառայությունների մատուցման պայմանագրի շրջանակներում ձեռքբերված ՀՀ տարածքում բազային և շարժական ռադիոմոնիթորինգի համակարգի ներդրման աշխատանքների համար անհրաժեշտ պայմանների և պահանջների տեխնիկական առաջադրանքի (հետայսու՝ Առաջադրանք) հիման վրա:

Գործի քննության անհրաժեշտությունից ելնելով՝ խնդրում եմ պատասխանել հետևյալ հարցադրումներին.

1. արդյո՞ք բողոքարկվող Ընթացակարգի հրավերի պայմանագրի նախագծի N 1 հավելվածով նախատեսված տեխնիկական բնութագիրը համապատասխանում է Առաջադրանքով սահմանված պահանջներին:

2. բողոքաբերի կողմից ներկայացվել է Ընթացակարգի հրավերի վերաբերյալ կատարված մասնագիտական վերլուծություն, դիտողություններ և առաջարկություններ, առ այն, թե ինչպիսին պետք է լինի Ընթացակարգի հրավերը, որպեսզի լինի մրցակցային և ոչ խտրական, արդյո՞ք ներկայացվածը բխում է Առաջադրանքով սահմանված պահանջներից, թե՞ ոչ:

Միևնույն ժամանակ խնդրում եմ ուսումնասիրել բողոքաբերի կողմից հավելված 1-ով ներկայացված համեմատական վերլուծությունը և ներկայացնել Ձեր դիտարկումը:

Կից տրամադրվում է Ընթացակարգի հրավերը, «Հիբրիդ Տելեմատիկա» ՍՊԸ-ի կողմից 07.02.2022թ. ներկայացված բողոքը և 16.02.2022թ. գրությունը՝ կից նյութերով»:

Ի պատասխան վերը նշված գրության՝ «Լոկատոր» ՓԲԸ-ն 17.02.2022թ. թիվ 166/1/22 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Ի պատասխան Ձեր կողմից ուղարկված գրության՝ ստորև ներկայացնում ենք նշված հարցադրումների պատասխանները, ինչպես նաև «Լոկատոր» ՓԲԸ-ի դիտարկումը:

Հարց 1. Արդյո՞ք բողոքարկվող Ընթացակարգի հրավերի պայմանագրի նախագծի N1 հավելվածով նախատեսված տեխնիկական բնութագիրը համապատասխանում է Առաջադրանքով սահմանված պահանջներին:

Պատասխան

Այո, այն փաստացի ներառում է Առաջադրանքի բոլոր պահանջները:

Հարց 2. Բողոքաբերի կողմից ներկայացվել է Ընթացակարգի հրավերի վերաբերյալ կատարված մասնագիտական վերլուծություն, դիտողություններ և առաջարկություններ, առ այն, թե ինչպիսին պետք է լինի Ընթացակարգի հրավերը, որպեսզի լինի մրցակցային և ոչ խտրական, արդյո՞ք ներկայացվածը բխում է Առաջադրանքով սահմանված պահանջներից, թե՞ ոչ:

Պատասխան

Ոչ: Համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասի՝ գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռք բերման և վճարման պայմանները՝ բացառելով տարակերպ մեկնաբանություն:

Ձեր կողմից տրամադրված վերլուծության մեջ, բերված առաջարկները, կատարված փոփոխություններն ու դիտողությունները չեն բխում Առաջադրանքով սահմանված պահանջներից, ինչպես նաև չեն ապահովում գնման առարկայի նկարագրության հստակ լինելու պահանջը:

Անդրադառնալով հավելված 1-ով ներկայացված համեմատական վերլուծությանը կարող ենք ասել՝ այո, R&S ընկերության արտադրած, համեմատության մեջ բերված սարքերը համապատասխանում են առաջադրանքում բերված տեխնիկական պահանջներին: Սակայն նույն հավելվածում բերված այն պնդումը, որ բացառապես այդ արտադրողի սարքերն են կարող համապատասխանել գնման առարկայի տեխնիկական պահանջներին չի համապատասխանում իրականությանը:

Մենք կատարել ենք ուսումնասիրություն նաև այլ արտադրողների արտադրանքի շրջանում: Ստորև ներկայացնում ենք մի քանի արտադրողների սարքերի ցանկը, որոնք համապատասխանում են ITU համապատասխան ռեկոմենդացիաների պահանջներին:

Ռադիոմոնիթորինգի միջոցների մասին տեղեկատվության պաշտոնական աղբյուրներից ստացված տեղեկատվության հիման վրա կարող ենք ասել, որ հետևյալ արտադրողները՝ Narda, CRFS, IZT, Anritsu, Keysite, TCI, LSTelcom, R&S, Infovista առաջարկում են ITU ռեկոմենդացիաներին համապատասխանող ռադիոընդունիչներ և պելենգատորներ: Դրանցից մի քանիսը առաջարկում են նաև ծրագրային ապահովումներ, որոնք թույլ են տալիս կատարել չափումներ ITU համապատասխան ռեկոմենդացիաներին համաձայն:

N/N	Company	Monitoring receiver	Portable monitoring receiver	Handheld spectrum analyzer	Autonomous Mobile Network Scanner
1	Narda	Signal Shark 3320 NRA6000RX	Signal Shark, IDA2		
2	CRFS	RFeye Node 40-8			
3	IZT	R5010, R5040			
4	Anritsu	MS27101A		MS2720T MS2090A	
5	Keysite	N6841A RF		N9961A	FSR1+NEMO outdoor
6	TCI	Model 920 EagleEye Model 647D			
7	LSTelcom	FMU306W SMU306W TMU306W TMU312N TMU318W	PMU306W PPU306W		
8	Infovista				TEMS Investigation + PCTEL

Անհրաժեշտ է նշել, որ ոչ բոլոր արտադրողներն ունեն առաջադրանքում պահանջվող սարքավորումների և գործառնությունների ամբողջական ցանկը: Դա կապված է այն բանի հետ, որ արտադրողներն ունեն շուկայական կոնկրետ ուղղվածություններ՝ ազգային անվտանգության, ռազմական նշանակության, բջջային կապի, կիրառական չափումների և այլն:

Կան նաև ընկերություններ, օրինակ TCI (ԱՄՆ), LSTelcom (Գերմանիա), CTЦ (ՌԴ), Rohde & Schwarz (Գերմանիա), որոնք առաջարկում են համակարգային լուծումների ինտեգրացիա:

Նման ինտեգրատոր ընկերությունները, իրականացնում են համակարգերի նախագծում, ինտեգրացիա և սպասարկում, ունեն շատ մեծ փորձ այսպիսի համակարգերի կառուցման մեջ ու նմանատիպ դեպքերում ընտրում են համակարգերի բաղկացուցիչները անկախ արտադրողից ըստ անհրաժեշտության այնպես, որ դրանք լիարժեքորեն համապատասխանեն տեխնիկական առաջադրանքների պահանջներին: Հարկ է նշել, որ ունենալով երկարատև սերտ կապեր չափիչ գործիքների արտադրողների հետ, ինտեգրատոր կազմակերպությունները հիմնականում ունենում են էական գնային առավելություններ, ինչն էլ թույլ է տալիս մրցունակ լինել»:

<u>5. ԳԲՔԱ-ՆԳ-2022/16 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ԳԲՔԱ-ՆԳ-2022/16 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. Համաձայն ՀՀ կառավարության 2019 թվականի հոկտեմբերի 3-ի թիվ 1346-Լ որոշման՝ ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության կարիքների համար «ՀՀ տարածքում բազային և շարժական ռադիոմոնիթորինգի համակարգի» նախագծման ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարված ընթացակարգի արդյունքում 22.09.2020թ.-ին ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության և «Լոկատոր» ՓԲԸ-ի միջև կնքվել է «ԲՏԱՆԳՀԾՁԲ-2020/08» ծածկագրով ծառայությունների մատուցման պայմանագիր, որի արդյունքում ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարությունը ձեռք է բերել «ՀՀ տարածքում բազային և շարժական ռադիոմոնիթորինգի համակարգի» ներդրման աշխատանքների համար անհրաժեշտ պայմանների և պահանջների տեխնիկական առաջադրանք:

2. Այնուհետև՝ Տեխնիկական առաջադրանքի հիման վրա ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության կողմից «ՀՀ տարածքում բազային և շարժական ռադիոմոնիթորինգի համակարգի» ներդրման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ԲՏԱՆ-ԲՄԱՇՁԲ-2022/01» ծածկագրով բաց մրցույթ (հետայսու նաև՝ Ընթացակարգ):

3. Ընթացակարգի հրավերի 1-ին մասի 1.1 կետի համաձայն՝ գնման առարկա է հանդիսանում ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության կարիքների համար՝ «ՀՀ տարածքում բազային և շարժական ռադիոմոնիթորինգի համակարգի» ներդրման աշխատանքների ձեռքբերումը (այսուհետ՝ նաև աշխատանք), որը խմբավորված է 1 չափաբաժիններում՝

Չափաբաժինների համարները	***Չափաբաժնի անվանումը***
1	«ՀՀ տարածքում բազային և շարժական ռադիոմոնիթորինգի համակարգի» ներդրման աշխատանքներ

Աշխատանքի տեխնիկական բնութագրերը, ինչպես նաև մասնագիրը, տեխնիկական տվյալները և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը կազմում են կնքվելիք պայմանագրի անբաժանելի մասը, որի նախագիծը ներկայացված է սույն հրավերի N 6 հավելվածում:

4. Ընթացակարգի հրավերի պայմանագրի նախագծին կից սահմանվել է Հավելված 1-ը՝ տեխնիկական բնութագիրը:

5. «Հիբրիդ Տելեմատիկա» ՍՊԸ-ն 07.02.2022թ. ներկայացված բողոքով վիճարկում է այն փաստը, որ «ԲՏԱՆ-ԲՄԱՇՁԲ-2022/01» ծածկագրով բաց մրցույթի հրավերի տեխնիկական բնութագրով պահանջված սարքավորումները համապատասխանում են բացառապես ROHDE&SCHWARZ (R&S) ընկերության արտադրության սարքերին:

6. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով «Հիբրիդ Տելեմատիկա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքը՝ կից փաստաթղթերով, ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության դիրքորոշումը՝ կից փաստաթղթերով, ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության և «Լոկատոր» ՓԲԸ-ի միջև կնքված «ԲՏԱՆԳՀԾՁԲ-2020/08» ծածկագրով ծառայությունների մատուցման պայմանագիրը, «Լոկատոր» ՓԲԸ-ի դիրքորոշումը՝ կից փաստաթղթերով, «ԲՏԱՆ-ԲՄԱՇՁԲ-2022/01» ծածկագրով ընթացակարգի հրավերը և գործով առկա նյութերը, հայտնում եմ հետևյալը.

Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի համաձայն՝

1. Սույն օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք, այն է՝

1) պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերում՝ համարժեք հատուցմամբ.

2) գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում:

2. Գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

(…):

Օրենքի 13-րդ հոդվածի համաձայն՝

1. Գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը: Գնման առարկայի բնութագրերը, որոնք ներառում են նաև պայմանագրի գինը, ընդգրկվում են պայմանագրում:

2. Գնման առարկայի բնութագրերը՝

1) պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար.

2) չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը.

3) պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը.

4) ներառում են գնման առարկայի մասնագրի, տեխնիկական տվյալների, իսկ աշխատանքների դեպքում՝ նաև աշխատանքների ծավալաթերթի, ժամանակացույցի և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը:

3. Ելնելով գնման առարկայի առանձնահատկությունից՝ դրանց հատկանիշները հնարավորինս ներառում են ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության որակին, ստանդարտին, անվտանգությանը, պայմանական նշաններին, տերմինաբանությանը, փաթեթավորմանը, բեռնաթափմանը, չափին, նախագծերին, ինչպես նաև գնման առարկայի այլ հատկանիշներին վերաբերող պայմանների հստակ նկարագրությունը՝ հիմնված միջազգային ստանդարտների և Հայաստանի Հանրապետությունում գործող նորմատիվատեխնիկական փաստաթղթերի, ստանդարտների, իսկ դրանց բացակայության դեպքում՝ ժամանակավոր տեխնիկական պայմանների վրա:

4. Գնման առարկայի հատկանիշները կարող են սահմանվել նաև որպես կատարողականի կամ գործառութային (ֆունկցիոնալ) նկարագրեր, որոնք պետք է

ներկայացվեն բավարար ճշտությամբ՝ հնարավորություն տալով մասնակիցներին և պատվիրատուին ճշգրիտ ընկալել պայմանագրի առարկան:

5. Գնման առարկայի հատկանիշները չպետք է պահանջ կամ հղում պարունակեն որևէ առևտրային նշանի, ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին, բացառությամբ այն դեպքերի, երբ անհնար է գնման առարկայի բնութագրումն առանց դրանց: Հղումներ օգտագործելու դեպքում հատկանիշների բնութագիրը պետք է պարունակի «կամ համարժեք» բառերը:

Այսպես՝ համաձայն ՀՀ կառավարության 2019 թվականի հոկտեմբերի 3-ի թիվ 1346-Լ որոշման՝ ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության կարիքների համար «ՀՀ տարածքում բազային և շարժական ռադիոմոնիթորինգի համակարգի» նախագծման ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարված ընթացակարգի արդյունքում 22.09.2020թ.-ին ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության և «Լոկատոր» ՓԲԸ-ի միջև կնքվել է «ԲՏԱՆԳՀԾՁԲ-2020/08» ծածկագրով ծառայությունների մատուցման պայմանագիր, որի արդյունքում ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարությունը ձեռք է բերել «ՀՀ տարածքում բազային և շարժական ռադիոմոնիթորինգի համակարգի» ներդրման աշխատանքների համար անհրաժեշտ պայմանների և պահանջների տեխնիկական առաջադրանք:

Այնուհետև՝ Տեխնիկական առաջադրանքի հիման վրա ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության կողմից «ՀՀ տարածքում բազային և շարժական ռադիոմոնիթորինգի համակարգի» ներդրման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ԲՏԱՆ-ԲՄԱՇՁԲ-2022/01» ծածկագրով բաց մրցույթ:

Ընթացակարգի հրավերի 1-ին մասի 1.1 կետի համաձայն՝ գնման առարկա է հանդիսանում ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության կարիքների համար՝ «ՀՀ տարածքում բազային և շարժական ռադիոմոնիթորինգի համակարգի» ներդրման աշխատանքների ձեռքբերումը (այսուհետ՝ նաև աշխատանք), որը խմբավորված է 1 չափաբաժիններում՝

Չափաբաժինների համարները	***Չափաբաժնի անվանումը***
1	«ՀՀ տարածքում բազային և շարժական ռադիոմոնիթորինգի համակարգի» ներդրման աշխատանքներ

Աշխատանքի տեխնիկական բնութագրերը, ինչպես նաև մասնագիրը, տեխնիկական տվյալները և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը կազմում են կնքվելիք պայմանագրի անբաժանելի մասը, որի նախագիծը ներկայացված է սույն հրավերի N 6 հավելվածում:

Ընթացակարգի հրավերի պայմանագրի նախագծին կից սահմանվել է Հավելված 1-ը՝ տեխնիկական բնութագիրը:

Այսպիսով՝ արձանագրում եմ, որ «Հիբրիդ Տելեմատիկա» ՍՊԸ-ն 07.02.2022թ. ներկայացված բողոքով պնդել է այն փաստը, որ «ԲՏԱՆ-ԲՄԱՇՁԲ-2022/01» ծածկագրով բաց մրցույթի հրավերի տեխնիկական բնութագրով պահանջված սարքավորումները համապատասխանում են բացառապես ROHDE&SCHWARZ (R&S) ընկերության արտադրության սարքերին:

Ի պատասխան Ընկերության պնդմանը՝ Պատվիրատուն մասնավորապես հայտնել է, հետևյալը.

««Հիբրիդ Տելեմատիկա» ՍՊԸ կողմից արված վերլուծությունը չունի որևէ իրավական ուժ, պարտադիր բնույթ, և ինքնին չի կարող ապացույց հանդիսանալ բողոք բերողի վկայակոչած հանգամանքին՝ համապատասխանությունը բացառապես ROHDE&SCHWARZ ընկերության արտադրության սարքերին: Մասնագիտական վերլուծությունը կարող է վկայել միայն այն մասին, որ ROHDE&SCHWARZ ընկերության արտադրության սարքերը համատասխանում են հրավերով սահմանված չափանիշներին:

Այնուամենայնիվ, Հավելված 1-ում նշված է, որ 5.2, 5.3 և առավելևս 5.5 ենթաբաժիններում չափազանց կոնկրետացված է, թե ինչպիսին պետք է լինեն անտենաները, որոնք ապահովում են ազդանշանների ընդունում և տեղորոշում: Դիտարկելով նշված ենթաբաժիններից 5.5-ը՝ որպես վատագույն տարբերակ ցանկանում ենք նշել, որ տվյալները վերցվել են Հեռահաղորդակցության միջազգային միության 2015թ. Հրապարակված «Ռադիոհաճախականային սպեկտրի օգտագործման հսկում» Տեղեկագրից (Контроль за использованием спектра- Справочник): Տվյալ Տեղեկագրի 3-րդ գլուխը վերաբերվում է «Սպեկտրի օգտագործման հսկման» և «Հսկման գործողությունների ավտոմատացմանը»: Ենթագլուխ 3.2.2.3-ից սկսում են նկարագրել անտենաների տեսակները (էջ 120): Ենթագլուխ 3.2.4.1՝ «Շատ բարձր հաճախականությունների և ուլտրաբարձր հաճախականությունների համար շրջանաձև անտենաների տիպերը», հստակ նշված է, որ 100 ՄՀց հաճախականություններից ներքև հաճախականային շերտերում ընդհանուր անտենաների դեպքում ունենում ենք

զգայնության սահմանափակում: Այդ իսկ պատճառով ընտրվել է 8.3կՀց-100ՄՀց շերտի անտենա: Հաջորդ անտենան դա 20ՄՀց-1300ՄՀց անտենան է, որի տիպի և ռադիոհաճախականային տիրույթի վերաբերյալ տեղեկատվությունը բերված է էջ 134-ում:

Հարկ ենք համարում նշել, որ «Հեռահաղորդակցության Հանրապետական Կենտրոն» ՊՈԱԿ-ում ներկայումս տեղորոշման աշխատանքների իրականացման համար օգտագործվում է դեռևս 2001թ. «Aerosystems» Կանադական ընկերությունից ձեռքբերված Cubic ֆիրմային արտադրության AA 1319 մակնիշի անտենան, ինչը նշանակում է, որ նշված հաճախականային շերտում տեղորոշման անտենաներ արտադրում է ոչ միայն բողոք բերողի կողմից նշված ընկերությունը:

1300ՄՀց-6000ՄՀց հաճախականային շերտի ընտրությունը պայմանավորված է ռադիոմոնիտորինգի իրականացման համար նախատեսված ռադիոհաճախականությունների շերտերով: Ինչ վերաբերվում է EB500 ընդունիչի համապատասխանությունը, ապա այդ ընդունիչը հանդիսանում է նմանատիպ ընդունիչների լավագույններից մեկը և աշխարհում ռադիոմոնիթորինգի համակարգեր արտադրող և նախագծող բազմաթիվ կազմակերպություններ այն ներառում են որպես բաղադրիչ մաս իրենց համակարգերում: Կարող ենք դիտարկել չինական Jasqsson new technology limited ռադիոհաճախականային սպեկտրի մոնիտորինգի և տեղորոշման SkyScan 7 համակարգը, գերմանական LS TelCom և այլն»:

Այնուհետև՝ բողոքի քննության շրջանակներում «Հիբրիդ Տելեմատիկա» ՍՊԸ-ն 16.02.2022թ. գրությանը կից Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին է ներկայացրել «ԲՏԱՆ-ԲՄԱՇՁԲ-2022/01» ծածկագրով բաց մրցույթի հրավերի վերաբերյալ իր կողմից կատարված մասնագիտական վերլուծությունը, դիտողությունները և առաջարկությունները, առ այն, թե ինչպիսին պետք է լինի տվյալ ընթացակարգի հրավերը, որպեսզի լինի մրցակցային և ոչ խտրական:

Այսպիսով՝ բողոքաբերի կողմից գործի քննությամբ ներկայացված փաստերի հիմնավորվածությունը գնահատելու հանգամանքով պայմանավորված՝ Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը 16.02.2022թ. թիվ ԲՔԱ-ԳՆ/1/2804-2022 գրությամբ դիմել է «Լոկատոր» ՓԲԸ-ին՝ հայտնելով հետևյալը.

«ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի վարույթում է գտնվում ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության կողմից «ՀՀ տարածքում բազային և շարժական ռադիոմոնիթորինգի համակարգի» ներդրման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարված «ԲՏԱՆ-ԲՄԱՇՁԲ-2022/01» ծածկագրով բաց

մրցույթի շրջանակներում «Հիբրիդ Տելեմատիկա» ՍՊԸ-ի 07.02.2022թ. ներկայացված բողոքը:

Տեղեկացնում եմ, որ <u>Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշմամբ ԳԲՔԱ-ՆԳ-2022/16 բողոքի շրջանակներում «Լոկատոր» ՓԲԸ-ն ներգրավվել է որպես կողմ, հաշվի առնելով այն փաստական հանգամանքը, որ Ընթացակարգի հրավերը կազմվել է «ԲՏԱՆ-ԳՀԾՁԲ-2020/08» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության և «Լոկատոր» ՓԲԸ-ի միջև կնքված ծառայությունների մատուցման պայմանագրի շրջանակներում ձեռքբերված ՀՀ տարածքում բազային և շարժական ռադիոմոնիթորինգի համակարգի ներդրման աշխատանքների համար անհրաժեշտ պայմանների և պահանջների տեխնիկական առաջադրանքի հիման վրա:</u>

Գործի քննության անհրաժեշտությունից ելնելով՝ խնդրում եմ պատասխանել հետևյալ հարցադրումներին.

1.արդյո՞ք բողոքարկվող Ընթացակարգի հրավերի պայմանագրի նախագծի N 1 հավելվածով նախատեսված տեխնիկական բնութագիրը համապատասխանում է Առաջադրանքով սահմանված պահանջներին:

2. բողոքաբերի կողմից ներկայացվել է Ընթացակարգի հրավերի վերաբերյալ կատարված մասնագիտական վերլուծություն, դիտողություններ և առաջարկություններ, առ այն, թե ինչպիսին պետք է լինի Ընթացակարգի հրավերը, որպեսզի լինի մրցակցային և ոչ խտրական, արդյո՞ք ներկայացվածը բխում է Առաջադրանքով սահմանված պահանջներից, թե՞ ոչ:

Միևնույն ժամանակ խնդրում եմ ուսումնասիրել բողոքաբերի կողմից հավելված 1-ով ներկայացված համեմատական վերլուծությունը և ներկայացնել Ձեր դիտարկումը:

Կից տրամադրվում է Ընթացակարգի հրավերը, «Հիբրիդ Տելեմատիկա» ՍՊԸ-ի կողմից 07.02.2022թ. ներկայացված բողոքը և 16.02.2022թ. գրությունը՝ կից նյութերով»:

Ի պատասխան վերը նշված գրության՝ «Լոկատոր» ՓԲԸ-ն 17.02.2022թ. թիվ 166/1/22 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Ի պատասխան Ձեր կողմից ուղարկված գրության՝ ստորև ներկայացնում ենք նշված հարցադրումների պատասխանները, ինչպես նաև «Լոկատոր» ՓԲԸ–ի դիտարկումը:

Հարց 1. Արդյո՞ք բողոքարկվող Ընթացակարգի հրավերի պայմանագրի նախագծի N1 հավելվածով նախատեսված տեխնիկական բնութագիրը համապատասխանում է Առաջադրանքով սահմանված պահանջներին:

Պատասխան

Այո, այն փաստացի ներառում է Առաջադրանքի բոլոր պահանջները:

Հարց 2. Բողոքաբերի կողմից ներկայացվել է Ընթացակարգի հրավերի վերաբերյալ կատարված մասնագիտական վերլուծություն, դիտողություններ և առաջարկություններ, առ այն, թե ինչպիսին պետք է լինի Ընթացակարգի հրավերը, որպեսզի լինի մրցակցային և ոչ խտրական, արդյո՞ք ներկայացվածը բխում է Առաջադրանքով սահմանված պահանջներից, թե՞ ոչ:

Պատասխան

Ոչ: Համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասի՝ գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռք բերման և վճարման պայմանները՝ բացառելով տարակերպ մեկնաբանություն:

Ձեր կողմից տրամադրված վերլուծության մեջ, բերված առաջարկները, կատարված փոփոխություններն ու դիտողությունները չեն բխում Առաջադրանքով սահմանված պահանջներից, ինչպես նաև չեն ապահովում գնման առարկայի նկարագրության հստակ լինելու պահանջը:

Անդրադառնալով հավելված 1-ով ներկայացված համեմատական վերլուծությանը կարող ենք ասել՝ այո, R&S ընկերության արտադրած, համեմատության մեջ բերված սարքերը համապատասխանում են առաջադրանքում բերված տեխնիկական պահանջներին: Սակայն նույն հավելվածում բերված այն պնդումը, որ բացառապես այդ արտադրողի սարքերն են կարող համապատասխանել գնման առարկայի տեխնիկական պահանջներին չի համապատասխանում իրականությանը:

Մենք կատարել ենք ուսումնասիրություն նաև այլ արտադրողների արտադրանքի շրջանում: Ստորև ներկայացնում ենք մի քանի արտադրողների սարքերի ցանկը, որոնք համապատասխանում են ITU համապատասխան ռեկոմենդացիաների պահանջներին:

Ռադիոմոնիթորինգի միջոցների մասին տեղեկատվության պաշտոնական աղբյուրներից ստացված տեղեկատվության հիման վրա կարող ենք ասել, որ հետևյալ արտադրողները՝ Narda, CRFS, IZT, Anritsu, Keysite, TCI, LSTelcom, R&S, Infovista առաջարկում են ITU ռեկոմենդացիաներին համապատասխանող ռադիոընդունիչներ և պելենգատորներ: Դրանցից մի քանիսը առաջարկում են նաև ծրագրային ապահովումներ,

որոնք թույլ են տալիս կատարել չափումներ ITU համապատասխան ռեկոմենդացիաներին համաձայն:

N/N	Company	Monitoring receiver	Portable monitoring receiver	Handheld spectrum analyzer	Autonomous Mobile Network Scanner
1	Narda	Signal Shark 3320 NRA6000RX	Signal Shark, IDA2		
2	CRFS	RFeye Node 40-8			
3	IZT	R5010, R5040			
4	Anritsu	MS27101A		MS2720T MS2090A	
5	Keysite	N6841A RF		N9961A	FSR1+NEMO outdoor
6	TCI	Model 920 EagleEye Model 647D			
7	LSTelcom	FMU306W SMU306W TMU306W TMU312N TMU318W	PMU306W PPU306W		
8	Infovista				TEMS Investigation + PCTEL

Անհրաժեշտ է նշել, որ ոչ բոլոր արտադրողներն ունեն առաջադրանքում պահանջվող սարքավորումների և գործառնությունների ամբողջական ցանկը: Դա կապված է այն բանի հետ, որ արտադրողներն ունեն շուկայական կոնկրետ ուղղվածություններ՝ ազգային անվտանգության, ռազմական նշանակության, բջջային կապի, կիրառական չափումների և այլն:

Կան նաև ընկերություններ, օրինակ TCI (ԱՄՆ), LSTelcom (Գերմանիա), CTЦ (ՌԴ), Rohde & Schwarz (Գերմանիա), որոնք առաջարկում են համակարգային լուծումների ինտեգրացիա:

Նման ինտեգրատոր ընկերությունները, իրականացնում են համակարգերի նախագծում, ինտեգրացիա և սպասարկում, ունեն շատ մեծ փորձ այսպիսի համակարգերի կառուցման մեջ ու նմանատիպ դեպքերում ընտրում են համակարգերի բաղկացուցիչները անկախ արտադրողից ըստ անհրաժեշտության այնպես, որ դրանք լիարժեքորեն համապատասխանեն տեխնիկական առաջադրանքների պահանջներին: Հարկ է նշել, որ ունենալով երկարատև սերտ կապեր չափիչ գործիքների արտադրողների հետ, ինտեգրատոր կազմակերպությունները հիմնականում ունենում են էական գնային առավելություններ, ինչն էլ թույլ է տալիս մրցունակ լինել»:

Այսպիսով՝ հաշվի առնելով «Լոկատոր» ՓԲԸ-ի կողմից վերը նշված գրությամբ ներկայացված պատասխանները և դիտարկումները, մասնավորապես՝ այն կարևոր հանգամանքը, որ բողոքաբերի կողմից բողոքի քննության ընթացքում տրամադրված վերլուծության մեջ բերված առաջարկները, կատարված փոփոխություններն ու դիտողությունները չեն բխում Առաջադրանքով սահմանված պահանջներից, որի հիման վրա կազմվել է «ԲՏԱՆ-ԲՄԱՇՁԲ-2022/01» ծածկագրով բաց մրցույթի հրավերը, բողոքաբերի այն պնդումը, որ բացառապես այդ R&S ընկերության սարքերն են կարող համապատասխանել գնման առարկայի տեխնիկական պահանջներին չի համապատասխանում իրականությանը՝ ներկայացնելով մի քանի արտադրողների սարքերի ցանկը, Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը բողոքի քննության շրջանակներում 01.03.2022թ. ժամը 09:25-ին հրավիրել է ևս մեկ նիստ՝ բողոքաբերին և Պատվիրատուին տրամադրելով «Լոկատոր» ՓԲԸ-ի գրությունը:

Ընկերության տնօրենը՝ ապահովելով իր և ներկայացուցիչների մասնակցությունը 01.03.2022թ. ժամը 09:25-ին բողոքի քննության նպատակով հրավիրված նիստին, միջնորդել է Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին տրամադրելու ժամանակ՝ բողոքի քննությամբ ներգրավված երրորդ անձ «Լոկատոր» ՓԲԸ-ի կողմից ներկայացված պատասխանների և դիտարկումների վերաբերյալ գրավոր դիրքորոշում ներկայացնելու համար, որը Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի կողմից բավարարվել է և Ընկերությանը տրամադրվել է ժամանակ, սակայն արձանագրում եմ, որ սույն որոշումը կայացնելու օրվա դրությամբ, Ընկերության կողմից «Լոկատոր» ՓԲԸ-ի բերված փաստերի վերաբերյալ, որը գործի լուծման համար էական նշանակություն ուներ, որևէ հակափաստարկ չի ներկայացվել:

Այսպիսով՝ հարկ եմ համարում արձանագրել, որ Օրենքի 50-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ ենթակետի համաձայն՝ Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին բողոքը ներկայացվում է գրավոր, ստորագրված, դրանում ներառելով՝ (...) բողոքի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները:

Վկայակոչված հոդվածի վերլուծությունից հետևում է, որ Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը բողոքի քննությունն իրականացնում է բողոքով ներկայացված ապացույցների հիման վրա, ընդ որում՝ բողոք ներկայացնելով՝ շահագրգիռ անձն է կրում բողոքի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները՝ որպես բողոքի բավարարմանն ուղղված էական նշանակություն ունեցող հիմքեր ու հիմանվորումներ ներկայացնելու պարտականությունը, մինչդեռ՝ արձանագրում եմ, որ ԳԲՔԱ-ՆԳ-2022/16 բողոքի լուծման

համար էական նշանակություն ունեցող փաստերը բողոքաբերի կողմից չեն հիմնավորվել, որի բացասական հետևանքը գտնում եմ, որ պետք է կրի բողոքը ներկայացրած կողմը՝ «Հիբրիդ Տելեմատիկա» ՍՊԸ-ն:

Այսպիսով՝ վերոգրյալի հաշվառմամբ, գտնում եմ, որ բողոքը ենթակա է մերժման:

Միևնույն ժամանակ, անդրադառնալով ՀՀ պետական վերահսկողական ծառայության 14.02.2022թ. թիվ Ե/286-22 գրությամբ բարձրաձայնված այն խնդրին, որ Ծառայությանը որպես կողմ ներգրավելու դեպքում այդ մասին անհրաժեշտ է տեղեկացնել նախապես՝ հաշվի առնելով քննվող գործի ծավալները, ապա սույն մասով հարկ եմ համարում արձանագրել, որ «Հիբրիդ Տելեմատիկա» ՍՊԸ-ն Ծառայությանը սույն գործով կողմ ներգրավելու միջնորդությունը Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացրել է 10.02.2022թ., ընդ որում՝ Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը «Հիբրիդ Տելեմատիկա» ՍՊԸ-ի միջնորդության հիման վրա՝ ԳԲՔԱ-ՆԳ-2022/16 բողոքի շրջանակներում ՀՀ պետական վերահսկողական ծառայությանը Կարգի 15-րդ կետի համաձայն կողմ ներգրավվելու վերաբերյալ տեղեկացրել է 10.02.2022թ. թիվ /ԲՔԱ-ԳՆ/1/2364-2022 գրությամբ, փաստացի՝ նույն օրը, երբ բողոքաբերի կողմից ստացվել է համապատասխան միջնորդությունը, հետևաբար նախապես տեղեկացնելու հնարավորություն տվյալ դեպքում Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը չի ունեցել:

Ինչ վերաբերում է այն փաստին, որ Ծառայությունը միջնորդությունը ստացել է 2022թ. փետրվարի 10-ին ժամը 14:40, իսկ գործի քննությունը նշանակվել է 2022թ. փետրվարի 11-ին ժամը 10:00-ին, հետևաբար մեկօրյա ժամկետում անհնար է եղել ուսումնասիրել գործի ողջ նախապատմությունը և ձևավորել մասնագիտական դիրքորոշում: Հետևաբար նշված սեղմ ժամկետներում Ծառայության աշխատակիցները հնարավորություն չեն ունեցել որպես երրորդ կողմ ներգրավվել գործի քննությանը, ապա սույն մասով հարկ եմ համարում արձանագրել, որ գործի քննության նպատակով 11.02.2022թ. ժամը 10:00-ին հրավիրված նիստի վերաբերյալ ժամանակացույցը www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքում՝ տեղեկագրում, հրապարակվել է միջնորդության վերաբերյալ գրությունը ստանալուց ավելի վաղ, այն է՝ 08.02.2022թ.-ին:

Միևնույն ժամանակ հարկ եմ համարում արձանագրել, որ սույն գործով ևս մեկ նիստ է հրավիրվել նաև 01.03.2022թ. ժամը 09:25-ին, սակայն Ծառայությունը չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը նիստին, ընդ որում՝ Ծառայության կողմից մինչև գործի ելքով որոշում կայացնելը բողոքի վերաբերյալ գրավոր դիրքորոշում չի ներկայացվել:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝

ՈՐՈՇԵՑԻ

«Հիբրիդ Տելեմատիկա» ՍՊԸ-ի կողմից 07.02.2022թ. ներկայացված բողոքը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**